«ԱՂԲԻՒՐԻ» ՅԱՒԵԼԻՄԱԾ

ՏԱՐԱԶԸ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՇԱԲԱԹԸ ՄԻ ԱՆԳԱՄ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ

№ 7 Կիրակի 14 Փետրուարի | Չորրորդ տարի 1893

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է «ԱՂԲԻՒՐԻ» եւ «ՏԱՐԱԶԻ» 1893 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Մանրամասնութիւնները վերջին երեսի վրայ

Մեր բաժանորդներից ալբէմներ կը ստանան միայն «ԱՂԲԻՒՐ» և «ՏԱՐԱԶ» ի միասին ստացողները, իսկ միայն «ԱՂԲԻՒՐ» կամ «ՏԱՐԱԶ» ստացողները ոչ մի ալբէմ չեն ստանալ։ Այս տարւայ առաջին ալբէմն է ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ մեծագիր պատկերը։

Կ. Հ. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1884—1891 Թ. Համառօտ Հաշւի առիթով

Բաւական է մի թեթեւ ակնարկ ձգել Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան մեզ ներկայացրած 1889—1891 Թ. Հաշւի վրայ, որպէսզի համոզւենք որ ընկերութեան և իր ճիւղերի բոլոր ջանքը եղել է համարեա մէկ բացառապէս օգնելու ուսումնարաններին և ուսումնառուներին։ Այդ հանգամանքը ևս առաւել թելադրում է մեզ կանգ առնել ընկերութեան այդ Հաշւի վրայ։

Այդ Հաշւի մէջ ուղիղ է՝ կան մուտքի կէտեր, օրինակ չէ երևում թէ ինչու մնացորդը չէ ցոյց տրւած ճիւղերի գործունէութեան մուտքի և ելքի տարբերութեան համեմատ, օրինակ Թօրու վարչութիւնը այդ տարիների ընթացքում արդեամբ ունեցել է մուտք 1148 ռ. 35 կ., ելք 299 ռ. 80 կ., իսկ մնացորդ ցոյց է տրւած 402 ռ. 86 կ. կամ Թելաւի՝ մուտք 1627 ռ. 35 կ., ելք 1224 ռ. 41 կ., մնացորդ 21 ռ. 31 կ., այդ կէտերը կարօտ են անկասկած բացատրութեան։ Սակայն մեր առաջ դրւած թւանշանները բաւական են պարզելու գոնէ թէ ընկերութեան ամբողջ գործունէութեան մէջ Թիֆլիսի Հասարակութիւնը իրապէս քանի դեր է կատարել, որչափ եռանդ է ցոյց տւել։

Թիֆլիսի ճիւղը (որից մենք զանազանում ենք կենդրոնը) իր յատուկ, ընդհանուր ընկերութեան եկամուտներից անկախ մուտքի միայն երեք աղբիւր ունի. իր մայր գումարի տոկոսը, անդամակցական վճարը, պատահական արդիւնքներ՝ պարահանդէսներից և նւէրներից։ Առաջին աղբիւրից ստացել է 1889—1891 Թ. ընթացքում ընդամենը 5995 ռ. 56 կ., երկրորդից 2775 ռ.—իսկ երրորդից՝ 2689 ռ. 95 կ., որի մէջ նւէրներ կազմում են 296 ռ. 37 կ.։ Այդպիսով կարելի է ասել որ Թիֆլիսի ճիւղը իր մանաւանդ գործունէութիւնը հիմնում է գլխաւորապէս գրամագլխի տոկոսների վրայ, և համեմատաբար քիչ՝ ընթացիկ

արդիւնքների վրայ. հասկանալի է դառնում թէ ինչու Խորհուրդը Թիֆլիսի ընկերութեան շապագալի համար գերակշիռ նշանակութիւն է տալիս դրամագլխի աճման։

Եւ ուղիղ որ դրամագլուխը աճում է 1889 թ. սկզբում կենդրոնի դրամագլուխը հասնում էր 33,547 ռ., իսկ 1892 թ. յունուարի 1-ին. մօտաւորապէս 48,000 ռ., բայց այդ աճումը հեռանք չէ Թիֆլիսի ճիւղի ջանքերի։ Այդտեղ կայ Աբմաւիրի ճիւղի գումարը 8700 ռ., Բագուի Ա. Ծատուրեանից 500 ռ., Շուշու՝ 1,100 ռ., Ախալցխայի՝ 1575 ռ.։ Եթէ այս գումարները հանենք 48,000-ից, կը մնայ մի 3—4 հազարի աճում, որը գոյացել է խառն թէ Թիֆլիսի ճիւղի և թէ գաւառական մնացած ճիւղերի գործունէութիւնից։ Այս 3 հազարի մէջ է և պ. Սունդուկեանցի դրամատիկ. ընկերութեան յատկացրած նւէրը, որ միայն պահ է տւած Բ. Ընկերութեան։ Ինքը Թիֆլիսի հասարակութիւնը 1889—1891 թ. ոչինչ չէ արել ընկերութեան դրամագլխի աճման համար, և եթէ Թիֆլիսի ճիւղի դրամագլուխը այնուամենայնիւ աճում էր, դա նախորդ տարիներին հաւաքւած փողերի (մօտ, 27,227 ռ.) տոկոսիքից էր։

Ի գուր ջոյսեր է դրել Ընկերութեան Խորհուրդը Թիֆլիսի անդամների տարեվճարների և պատահական աղբիւրների վրայ։ 1889 թ. նա նախահաշուով յոյս է ունեցել ստանալու այս աղբիւրներից 2739 ռ. 15 կ., ստացել է 2248 ռ., 1890-ին —2213 ռ. 85 կ., ստացել է 1615 ռ. 37 կ., իսկ 1891 թ. 1947 ռ. 6 կ., ստացել է 1,599 ռ., շարունակ սպասածից պակաս։ Եւ որ նշանաւոր է, 1891 թ. ոչ մի նւէր չէ եղել, իսկ նախընթաց երկու տարիներում 178 ռ., 118 ռ. չնչին թւանշաններ։ Այդ բանը ստիպում է մարդուս մտածել թէ 1889—1891 թ. Թիֆլիսի հասարակութեան մէջ Ընկերութիւնը համակրողներ շատ քիչ ունէր։ Այդպիսի եզրափակութիւն հարկաւոր է լինում անել և այն փաստից, որ 1889 թ. մինչև 1891 թ. անդամների թիւը Թիֆլիսում 234-ից հասաւ 128, այսինքն մօտաւորապէս կիսեց։

Մի կողմից նւիրաբերութիւնների համարեա թէ բացակայութիւն, միւս կողմից՝ անդամների թւի արագ նւազում. ահաւոր մտածողութիւնների տեղի են տալիս այդ պարագաները։

Եւ գործունէութեան այսպիսի թմրութիւն Թիֆլիսում, Ընկերութեան կենդրոնի նոյն իսկ քթի տակ։

Ն Ե Կ Ր Ա Մ Ո Վ Ի Ց

***

Օ՜, երգեր, երգեր—մխիթ վկաներ
Աշխարհի համար թափած արցունքիս.
Ծնւում էք ահեղ, մռայլ ժամերում,
Երբ փոթորիկ է պաշարած հոգիս...
Ծնւում էք, դիպչում մարդկանց սրտերին,
Որպէս ալիքներ կարծես ժայռերին...

Ա. ՆԱՏՈՒՐԵԱՆ

23 փետրուարի, 1892 Թ. Մոսկւա.

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԵՂԵՌՆԱԴՈՐԾՈՒԹԻՒՆ

(Թարգմ. Գասոյն Վ.ասից)

Նիւ-Եօրքում բնակւող իրլանդացիներից ժամադործ Օ'Կլօքը—ամենակոպիտն էր։

Բարձրահասակ, նիհար, անտաշ, մռայլ դէմքով, ծաղկի նշաններով ծածկւած երեսով, կապոյտ մազերով, սուր քթով, դէս ու դէն վազվզող խորամանկ աչքերով, որոնք միշտ ծածկւած էին լինում կոպիտ ակնոցներով, միշտ լուռ՝ նայիր կարծիքը երբեք ոչ ոքի չէր յայտնում։ Անց ու դարձ անողները յաճախ լսում էին նրա քնակարանից դուրս եկող ճիչն ու աղաղակը, լիշոցները։

—Տես, ասում էին դրացիները. Օ' Կլօքը դարձեալ ծեծում է իր կնոջ։ Ա՜յ, կը տեսնէք, նրան մի վնաս կը հասցնի։

Եւ այսպէս փոքր առ փոքր ամբողջ գիւղում կազմւեց այն կարծիքը թէ՝ Օ' Կլօքի կնոջ վիճակւած է սարսափելի մահով մեռնել։ Նրան ատելի խղճում էին այն հասարակ պատճառով, որ նա շատ գեղեցիկ կին էր։ Երբեմն նրան մինչև անգամ նախազգուշացնում էին, խորհուրդ տալով զգոյշ լինել ամուսնուց։ Օ' Կլօքի կինը այդ բոլորին սլաուասխանում էր ծիծաղով և ցոյց տալիս իր սպիտակ ատամների շարքը, իսկ երբեմն նաև աւելացնում էր.

—Ոչինչ. մեք վախենալ։ Մէրթէ դուք կարծում էք, որ մէկ մարդի, որի տան պատի մի կողմը ապրում է դատաստանական քննիչը կը համարձակւի որ և է յանցանք գործել։

Ժամագործ Օ'Կլօքը իրաւ, բնակւում էր դատաստանական քննիչ—Գրիբբիշի բնակարանի կողքին, մէկ մարդու, որ խորամանկ էր, որպէս սատանայ և հռչակւած էր, իբրև ամենալաւ քննիչ ամբողջ Նիւ-Եօրքում։

ЛИТ. МЕСКХЕВА

Բուխարայի Էմիրը

Այն օրից, երբ Օ' Կլօքի կնոջ առաջին անգամ նախագծուշացրին իր ամուսնու վատ բնաւորութեան համար, անցաւ մի տարի։ Յանկարծ Օ'Կլօքի կինը անսպառելի կերպով անյայտացաւ։ Մի գեղեցիկ օր նրա անյայտանալը ամենքն իմացան։ Դրացիներից մինն իր հարց ու փորձով դիմեց ժամագործին։ Վերջինը շատ կոպիտ կերպով նկատեց, որ իր կնոջ բացակայութիւնն ոչ ոքի չի վերաբերում։

Վերջ ի վերջոյ կասկածներն այնտեղ հասան, որ կարևոր համարուեց—տեղեկացնել քննիչին, որը ոչ մի րոպէ չը կորցնելով՝ գնաց ժամագործի մօտ։

Պ. Գրիբբիշի կարծիքով քրէական յանցանքները քննելիս՝ պէտք էր վճռողաբար գործել։ Հէնց այդ պատճառով նա անմիջապէս եկաւ Օ' Կլօքի մօտ և, ուղղակի նայելով նրա աչքերին, հարցրեց.

—Ի՞նչ արիք ձեր կնոջ դիակը նրան սպանելուց յետոյ։

—Ե՞ս. ես սպանեցի կնոջս. Ի՞նչ էք ասում, պատասխանեց Օ' Կլօքը իրան չըկորցնելով.—Ա՛ստուածՙ իմ, մեր կռիւներում ոմն էր միշտ յաղթող Հանգիստանում, եթէ ոչ նա։ Խնդրեմ նայէք կապտած տեղերիս։ Իսկ թէ նա այժմ ո՞րտեղ է գըտնըւում, երդւում եմ ձեզ, որ ես բոլորովին չեմ իմանում։ Ես միայն գիտեմ այն, որ նա վեց օր սրանից առաջ դուրս գնաց տանից՝ թէլ առնելու առիթով և մինչև օրս չէ վերադարձել։ Դժբախտաբար սա առաջին անգամ չէ, որ նա դէս-դէն է վազում և ես համոզւած եմ, որ նա կրվերադառնայ... իսկ այժմ, խնդրեմ ինձ Հանգիստ թողնէք։

—Հանգի՞ստ թողնեմ։ Ես ձեզ ի՞նչպէս կարող եմ Հանգիստ թողնել, բացականչեց քննիչը կատաղած։ Մ'թէ դուք չէք հասկանում, որ ձեր ցինիքական վարմունքը աւելի է հաստատում իմ կասկածները... ես համոզւած եմ, որ դուք ձեր կնոջը կորտել էք...

Ոստիկաններ, կալանաւորեցէք այս չարագործին։

Երկու ոսոիկաններ, որոնք հետևում էին քննիչին, անմիջապես բռնեցին ժամագործին, և առանց ուշադրութիւն դարձնելու նրա աղաչանքին և պաղատանքին՝ քարշ տւին դէպի բանտը։ Ամբոխը աղաղակներով հետևեց նրան մինչև բանտարկութեան տեղը։

—

Միւս օրը առաւօտեան, Նիւ-Եօրքի բոլոր լրագիրները մեկը միւսի ետևից՝ աշխատում էին հաղորդել հասարակութեանը երիտասարդ կնոջ գաղտնի սպանութեան վերաբերեալ հետաքրքիր մանրամասնութիւնները։ Լրագիրները գովաբանում էին ոսոիկանութեան եռանդը և մանրամասնօրէն նկարագրում այն հարց ու փորձը, խուզարկութիւնը, որոնց շնորհիւ բացւել էր չարագործութիւնը։

Հրաշալիք մարդ էր պ. Պիւկնիւսը։ Միացեալ նահանգներում այսպիսի ոսոիկան չէք կարող գտնել։ Ոչ մի դատաստանական քննիչ նրա հետ մրցել չէր կարող. ոչ ոք ո՛չ նրա ճարպիկութիւնն չունէր և ո՛չ էլ նրա պէս իմանում էր թէ գործը ինչ կերպ պէտք էր տանել։ Երբ նա ոգևորւում էր և, այսպէս ասած մտնում իր դերի մէջ, նրան միշտ յաջողւում էր իր խօսակցին ասել տալ այն, ինչ իրան հարկաւոր էր։ Այսպէս նրան յաջողւեց դուրս կորզել Սարա-Բերնարից նրա կեանքի զարմանալի մանրամասնութիւնները, սկսած հին անցեալներից մինչև վերջին ժամանակները։ Նրա սիրած պարապմունքը—կատարած եղեռնագործութիւնների ուսումնասիրութիւնն էր։ Նա ամեն մի եղեռնագործութիւնից ստեղծում էր ամբողջ վէպ, դրամատիքական տեսարաններով լի. այդպիսի դէպքերում նրա երևակայութիւնը սահման չունէր... Նա աշխատակցում էր Նիւ-Եօրքի լրագիրներին և նրա գրածները անգին էին համարւում, միայն ,,New-Iork Humbug'' լրագիրը առանձին յարգանք չէր տածում դէպի նրա տաղանդը...

Պիկնիւսը առաջիններից մինն էր, որ հաղորդեց հասարակութեանը Օ' Կլօքի գործի մանրամասնութիւնը։ Եւ այդ անելիս նա ոչ միայն փոփոխութեան ենթարկեց վերջինի կեանքի մի քանի մանրամասնութիւնները, այլ աշխատեց հանդէս հանել բոլորովին այլ անձնաւորութիւն, որ մեղադրւած անձնաւորութեան հետ ոչ մի կապ չունէր։

Նա ոչ մի րոպէ չէր կասկածում, որ Օ' Կլօքը մեղաւոր է. նրա կարծիքով երիտասարդ կնոջ դիակը կորած էր և թաքցրած մի տան մէջ։ Նա չէր դադարում ամենայն օր մատնացոյց անելու վարչութեան դատապարտելի դանդաղութեան վրայ և պնդում էր որ հարկաւոր է նորից խիստ քննութիւն նշանակել մամուլի որ և է ներկայացուցչի մասնակցութեամբ։ Նրա այդչափ պնդելուց յետոյ դատաստանական քննիչ Դրիքբիշը վերջապէս վճռեց նոր քննութիւն նշանակել, որին հրաւիրեց մասնակցելու պ. Պիկնիւսին իր մի քանի ընկերների հետ. այս անգամ նրանք վճռել էին մանրամասն խուզարկել ժամագործի բնակարանի բոլոր ու պուճախը։

Խուզարկութիւնը նշանակւած էր առաւօտեան և տևեց ոչ պակաս քան չորս ժամ։ Օ' Կլօքին թոյլատրւած էր ներկայ գտնւելու այդ խուզարկութեանը չորս ոսոիկանների հսկողութեան ներքոյ։ Նա բոլորովին հանդիստ էր և միանգամայն անհոգ էր երևում։

Տան մէջ, ինչպէս և առաջ, ոչինչ չէր գտան։

—Իջնենք նկուղը, հրամայական ձայնով արտասանեց Պիկնիւսը։ Նրա խօսակցութեան և շարժւածքներին նայելով, կարելի էր նրան իշխանաւորի տեղ ընդունել։

Իջան նկուղը. այդ տեղ առաջին անգամ գտել էին մի հին սղոց, որ ծածկւած էր կասկածաւոր բծերով, բայց Օ' Կլօքը ամենահանգիստ կերպով բացատրել էր որ այդ բծերը ոչ այլ ինչ էին, եթէ ոչ ժանգից առաջացած։ Այս անգամ սղոցը յանձնեց իշխանութեանը և նրա գտնելու մասին կազմուեցաւ արձանագրութիւն։ Պիկնիւսը գլուխ ցաւացնելու սովորութիւն չունէր, նա այդ բծերը տեսաւ թէ չէ, իսկոյն և եթ վճռեց, որ դրանք անկասկած արեան հետքեր են։ Մի քանի տեղ յատակը փորեցին, բայց ի գուր, ոչինչ չը գտան։ Յանկարծ Պիկնիւսը յիշեց որ նկուղի նոյնանման դէպքի մասին նա կարդացել էր Էդգարդ Պոյի վէպերից մինում։ Նա հանդիստաւոր կերպով վերցրեց մուրճը և սկսեց պատերին խփել։ Ներկայ գտնւողներն ապշած հետևում էին նրա հայեացքներին։ Այն ինչ Պիկնիւսը անհետևանք պատեց երեք պատի շուրջը և մօտենում էր չորրորդ պատի վերջին անկիւնին, սակայն ամեն տեղից լսւում էր մաքուր ձայն։ Յանկարծ Պիկնիւսը դադարց, նրան թւաց որ ձայնը փոխւեց։ Ի հարկէ պատի այդ տեղում գըտնւում էր մի փոս, որտեղ թագցրած էր դիակը։

Յաղթութեան ճիչն արդէն պատրաստ էր դուրս թռչել նրա շրթունքներից, բայց նա այդ միջոցին իրան պսպեց և վճռեց, որ աւելի լաւ է եթէ գիւտի պատիւը միայն իրան պատկանէր։

—Այստեղ ոչինչ չկայ, ասաց նա յուսահատ ձայնով, աւելի լաւ կը լինի այստեղից շուտով հեռանանք։

Ամենքն ուշադրութեամբ լսեցին նրա խորհուրդը, որովհետև նկուղը շատ խնամւած էր. բայց երբ նրանք բարձրանում էին սանդուղքը

ներով, Պիկնիւսը փոխանակ գնալու իր գործին, ինչպէս ենթադրում էին նրա ընկերակիցները, շտապով իջաւ ներքև և իր եռւից փակեց դուռը։

Նրա ուրախութիւնը սահման չունէր. նա ուրախութիւնից իր գլուխը կորցրեց։ Ո՜հ, ինչպէս պէտք է ուրիները ծուէին Գրիբբիշին և նրա յարգողները և որպիսի յաջողութիւն լրագիրները համար։ Բայց ամենագլխաւորն այն է, որ այդպիսի դէպքերում պէտք է զգուշութեամբ վարուել, որպէս զի աշխատելու միջոցին ոչ ոք նրան այնտեղ վրայ չը հասներ։ Այդ էր պատճառը, որ Պիկնիւսը գործ դրեց ամբողջ տասնևեօթ ժամ հասարակ դանակով պատի մէջ անցք բանալու համար։ Նա ահից դողում էր, իւրաքանչիւր րոպէ սպասելով, որ նրան ներկայանալու է 0' Կլօրքի կնոջ այլանդակած դիակը։ Երկար և ի զուր աշխատանքից յետոյ, նա ուղէն պատրաստ էր իր նախագծից հրաժարւելու, բայց նա յանկարծ նկատեց որ դանակը աւելի և աւելի է խրւում պատի մէջ։ Նա նոր աշխոյժով ձեռք զարկեց ընդհատած աշխատանքին և շուտով կատարելապէս համոզւեց, որ այդտեղից պատի մէջ բացւում է բաւականին խոր և կլոր անցք, որ անշուշտ յարաբերութիւն ունէր մի ուրիշ նկուղի հետ։ Սաստիկ յուզւած և սրտատրոփ, Պիկնիւսը դուրս կորզեց վերջին քարը և բաւականին լայն անցքով արագ անցաւ միւս նկուղը։

Նկուղը բոլորովին մութն էր, բայց այդ նրան չը վախեցրեց։ Նա վառեց լուցկին. լոյսով նրա աչքի առաջ ներկայացաւ մի այնպիսի տեսարան, որ ապշեց նա և քիչ էր մնում ուշաթափւէր. նա նկուղի մէջ տեսաւ մի ահագին քարեայ սեղան, որի վրայ թափւած էին արիւնոտ մսի կտորներ։ Շնչասպառ եղած ահից և զգւանքից, Պիկնիւսը իր թաշկինակով վեր թռցրեց ձեռքին ընկած հէնց առաջին կտորը, որ ի միջի այլոց, նա մարդու կտրած ձեռքի տեղ ընդունեց, և խելագարի պէս այդ դժոխքից դուրս գալու տեղ էր փնտրում։

Այս անգամ, գոնէ նա երկար չը մնաց մթնթաղանի մէջ. նա շուտ գտաւ դուռը, որ մի փոքր բաց էր և տանում էր դէպի սանդուղքը. մեկ թռիչքով նա ցատկեց մի քանի աստիճանների վրայով և ընկնելով մի կնոջ վրայ, որ ոմն է իմանում որտեղից էր այդտեղ յայտնւել, վերջապէս դուրս պրծաւ փողոցը։ Նա վճռեց անմիջապէս գնալ «Niw-Iork Humbug» լրագրի գրասենեակը, բայց հէնց մի քանի քայլ էր արել, մեկը կոպիտ կերպով կանգնացրեց նրան։ Յետ նայելով, նա տեսաւ աստիկանին մի ինչ որ անծանօթ կնոջ հետ, որ աստիկ բղաւում էր.

—Բռնեցէք գրան. դա գող-աւազակ է, հէնց այս րոպէին գողացաւ մեր նկուղից քննչի նախաճաշիկը։

—

Երբ ողորմելի Պիկնիւսը ուշքի եկաւ, նա այդ բանից սաստիկ ամաչում էր։ Այդ ժամանակ միայն նա նկատեց, որ այն թանգագին ոլոր, որի վրայ նա այնքան մեծ յոյսեր էր դրել, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ նապաստակի եռւի մասը... նա հասկացաւ որ ինքը սխալմամբ ընկել էր իր կողքին բնակւող քննչի նկուղը։

Բայց ողորմելի Պիկնիւսի համար ամենասարսափելին էր այն օրը, երբ նա գտաւ էր կանչւած։ Քննիչը մեղադրում էր նրան գողութեան մէջ, որովհետև այդ դէպքը լաւ առիթ էր Պիկնիւսին մի լաւ խայտառակելու։ Պիկնիւսի գործը քննելու օրը հաւաքւել էր մեծ բազմութիւն, որոնց թւում նաև Պիկնիւսը ճանաչեց նաև 0' Կլօքի կնոջը... Բանից երևաց, որ այդ կինը տուն էր վերադարձել հէնց այն ժամանակ, երբ Պիկնիւսն աշխատում էր նկուղում նրա այլանդակած դիակը գտնելու...

—

Պիկնիւսները շատ և շատ են եղել ամեն տեղ և դեռ երկար կը շարունակեն իրանց գողութիւնը...

ԴԱՐ. ՄԻՐՋՈՑԵԱՆ

ԿՈՐՈՍ

Սրտիս թագուհի,
Կարօտել եմ քեզ,
Ա՛խ, ինչ կըլինի
Յանկարծ յայտնուես.
Եւ թէկուզ իսկոյն
Դարձեալ չըքանաս,
Որպէս գիշերւան
Կարճատև երազ.
Մ՛իմիայն թէ տեսնեմ
Պատկերըդ մեկ էլ,
Մ՛իմիայն թէ ասեմ
Ոնց եմ կարօտել։

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ЛИТ. МЕСХІЕВА

Փ ա ր ա ւ ո ն ի ա ղ չ ի կ ը

(Գ. Էբերսի վէպի հերոսուհին)։

ՐԱՏԵՆԱԻՕՍԻԹԻՒՆ

Մուրատեանց Մելքիսեդեկ եպիսկոպոս. Հոմուսական Աստուածարանութիւն

Կ. Պոլիս. 1892 Տպ. Ն. Կ. Պէշիկթաշլեանի. Ա, 464 երես *)

Անցեալ 1892ի հոկտեմբերին սկզբները հրապարակ եկաւ Մուրատեանց Տ. Մելքիսեդեկ եպիսկոպոսի Հոմուսական Աստուածարանութիւնը։

Մենք պիտի վարձենք քննել թէ Մուրատեանց սրբազանին աշխատասիրութիւնը յաջողած է ծառայել առաջադրած նպատակին և ինչ արժէք ունի իբր հեղինակութիւն։

***

Ուշագրաւ է գրքին սկիզբը դրած Ծ. էջ Ճառաջաբանը, ուր անցեալի յիշատակներէն սրտաշարժ հատուածներ մէջ բերելէ ետք, հեղինակ Սրբազանը կ'անցնի պատմել իր գործին պատրաստութեան չարժառիթը ու կ'ուրուագծէ. Պարտաւորեցանք ձեռք բերել Աստուածաբանական ուսման վերաբերեալ և Ս. Գրոց հոգեւոյզ երիւսիրութիւններ, բնականօք թարգմանիչ ծաղկաքաղ առնել և մեր Առաքելական Ս. եկեղեցւոյ պաշտելի ուղղութեան համաձայն պատրաստել այն Հոմուսական Աստուածարանութիւնը, զոր այսօր ի լոյս ընծայելով կ'արկանենք իբրև լուսայ ի գաճճարան Հայ եկեղեցական մատենագրութեանն։

Դրքին նպատակը բնագաւառելով, հեղինակ Սրբազանը կը յայտարարէ թէ իր սեեռեալ գաղափարը եղած է մեր առաքելական անմահալին եկեղեցւոյ ուղղութեան հետեւիլ իր գործին ընթացքին մէջ։ Սակը պիտի ցուցնենք թէ հեղինակ Սրբազանին աշխատութեան սեղանին վրայ կայեն այն դանազան աղբիւրները, ինչպէս կարծեցնել կուտայ ձեզ և թէ թարգմանել և ծաղկաքաղ առնել բաները ոչքան առատձեռնութիւն ունին Հոմուսականին պատրաստութեան մէջ։

Ամբողջ երկասիրութեան վրայ ուշադիր ակնարկ մը միայն կը բաւէ զգուշացնել ընթերցողին թէ աշխատասիրող Սրբազանին դիրքն ու պաշտօնէութեան վիճակը նմանակ մը արատաւորելու առած է։ Պիտի չը ծանրանանք մանրամասնութեանց վրայ, ուստի յատուկ ընենք դիտողութիւնները միայն։

Հեղինակը առաջին անգամ քահանայութիւնը կամ նախապատրաստական դրութիւնը իբր աստուածային կազմակերպութիւն ապացուցանելու համար վկայութեանց կուտակում մը պարբերել ետք, անակնկալի կերպով կ'ընդունի թէ եկեղեցական պաշտօնէութիւնը ձեւացած է ժամանակին պահանջումներուն համաձայն, ու իբր նախնական կազմակերպութիւնն կը մնայ երկնական դրութեան պէս բան մը։ (Եբրեա 1—25)։

Եկեղեցական դասակարգին վրայ խօսելով, Ս. Գրքէն վկայութիւն կը բերէ հաստատելու համար ընդհանուր և մասնաւոր քահանայութիւնը. յանկարծ այս երկու հակառակ սկզբունքները իրարու հետ կը հաշտեին, եկեղեցական դասակարգը կ'անհերևութանայ և նախապատիւները պաշտօնէութիւնը, դառնալով միայն պատիւ։ (Ընդհատ երբեմն իրիմ) Արդարև կ'ուզենք հասկնալ Հայ եկեղեցական դասակարգը քաղդատելով ուրիշ նախրապետութեանց հետ, անթացասելի կարգադրի մը մէջ կը ձուլէ։ Հեղինակ Սրբազանը, որ կը լինի մեր նախրապետութեան ընտրողական սկզբունքները, բազդատելով երբայական կեղականութեան և հոմէական փոխանցական ձեռնադրութեան հետ, կը մոռնայ նշանակել թէ ինչով կը տարբերի մերը բողբոջական պաշտօնէութիւններէն, որք նոյնպէս ընտրոդական են (Երեմ 26—30)։

Ընթերցողը եթէ նկատի առած է այս պարագան, հետաքրքրութիւնն կը մղի լսել հեղինակին կարծիքը եկեղեցականաց ամուսնութեան խնդրին վրայ. ու ահա կը հանդիպի 174 էջը, Եկեղեցական պաշտօնէի ընտանեկան կեանքը վերնագրով. հոս վկայութիւնները կը բերուին թէ կուսակրօնութիւնը և թէ ամուսնութիւնը պաշտպանելու համար։ Եղրակացութիւնը հոն կը յանգի որ հովիւը (եպիսկոպոս թէ քահանայ, յայտնի չէ) կրնայ ամուսնացած ըլլալ։

Այնուհետև հովուական Աստուածաբանութիւնը կը կերբօնանայ երբայեցի հովուին վրայ, ու հովուական պաշտօնը, որ մեր եկեղեցիին մէջ վերապահուած է միայն ամուսնի եկեղեցականին, կ'ենթադրուի քահանայի կամ երէցի համար։ Ընթերցողը առանց ընդհատութեան առաջնորդական սեմոնները, վիճակները, վարչական և հոգևորական պաշտօնները, զլուխը, քաղաքները մէջ դիտելու անկիւնը, ամենուրեք կը տեսնէ հովիւ մը, որ կին ունի, մոզուլուզ կը հովէ, կը վարդապետէ, ամենայն ինչ է։

Հեղինակ Սրբազանը ոչինչ բացատրած կամ ճշդած է, ինչպէս ըսինք, հայ եկեղեցական դասակարգի մասին ու բարձրագոյն պաշտօնները կը սահմանէ անկարելի չուտ լատնակ երանգներով ձեւացած հովիւին, առանց բուն թէ ինչ դիրք ունի այն մեզ քաջածանօթ հայ նախրապետութեան մէջ։ Արդեօք կուսակրօն սարկաւագ որ հիմակ մեկնակէտն է մեր եկեղեցիին համար վարչական կ'վարդապետական բարձրագոյն պաշտօնէութեան, ամուսնացած քահանայի հետ իրաւանց հաւասար սահմանի վրայ կը նկատուի Հովուականն Աստուածաբանութեան մէջ, ու այսպէս ամուսնացած երէցին կը տրուի անկարելի եպիսկոպոսական աստիճան ու կամ թէ երէց հեղինակին համար համարձակ է եպիսկոպոս։—Ահա այս տեսակ հարցումներ կը ներկայանան ակամայ ընթերցողներու մտքին, որոնց մասին ոչինչ խօսած է դժբաղդաբար հեղինակ Սրբազանը։

***

Դալով հեղինակութեան, չենք վարանիր ըսել թէ Հայ եկեղեցական մատենագրութեան գանձարանին մէջ ձգուած այս լուսամայն մեզ համար չը ներկայացներ մեառալի կատարեալ գործիւն և դրուշմի հարազատութիւն. վասն զի Հովուականն Աստուածաբանութիւնը ծայրէ ի ծայր թարգմանութիւնն է Ալեքսանդր Վինեի Թէոլոժի Բաստորալ անուն գործին (Թարիղ Տպղր. Ֆիլչլաեէր). բայց թարգմանութիւն մը անհարազատ, այսինքն տեղ տեղ յապաւորով բողբոջական հեղինակին տեսութիւնները, տեղ տեղ

*) Սրատարակած „Հայրենիքիս" № 368։

խանգարելով ու երբեմն ալ աննչան յաւելումներ ընելով, երբ ալ սուլոզուածքէ դնոնէ չիչատակել առմայեն եկեղեցին ու քանի մը անուններ։ Ինչ որ անակնունելին է սակայն, միամտաբար չատ տեղեր ալ թարգմանիչը կ'ընդունի հեղինակին կարծիքները, մանաւանդ նւիրապետական դրութեանց նկատմամբ.—Ասոի Հ ո վ ո ւ կ ա ն Ա ս տ ո ւ ա ծ ա բ ա ն ո ւ թ ե ա ն մէջ տեսնուած տեսակ մը վարանոտ պայքարը եկեղեցական պաշտօնէութեան դիրքը որոշելու մասին։

Թարգմանիչ Սրբազանը թէպէտ Յառաջաբանին մէջ կարծեցնել կուտայ թէ իր աշխատութիւնը պատրաստելու համար չատ գործեր աչքէ անցուցած, ծ ա ղ կ ա ք ա ղ ըրած ու թարգմանած է՝ այդ զանազանական նիւթերէն ներդաշնակաւոր հմտութեամբ գործ մը երեան բերելու համար, սակայն բնագրին և թարգմանութեան վրայ ա բ ա գ ափոյթ բաղդատութիւն միայն կը բաւէ ցուցնել թէ թարգմանիչ սրբազանը իր աշխատութեան սեղանին վրայ ունեցած է մ իայն և մ իայն Վ ինէ ի այս նշանաւոր գործը։

Զարմանալին այն է, որ մինչ հեղինակը կը յիշատակէ չատ տեղ Պօսիւէն ու Մաբիյոնը, թարգմանիչ սրբազանը, որ չէ խղճած անխնայ չահագործել Վինէն, առանց անունը տալու, անիմաստ զգուշաւորութեամբ մը կը ջանայ իր թարգմանութեան մէջ յապաւել Մաբիյոնի անունը և մ իք ր ի ս տ ո ն ե ա յ պ ե ր ճ ա խ օ ս կը կոչէ զանի (երես 62)։

Հակառակ այս ազատ թարգմանութեան, որուն չնորհիւ լաւագոյն երկասիրութեան մը փորձը կարելի էր տալ, թարգմանութիւնը միջակ է։ Վինէի ոճը, նախադասութեանց դարձուածքները սահուն են, կոկիկ և ոլորուն. բայց թարգմանիչը կարելի եղածին չափ հաստ գրչի լողքար մը անցուցած է անոնց վրայէն և գեհնաքարշ տափակցուցած։

Սխալ թարգմանութիւններ ալ պակաս չեն, որոնց մէ կրնար խուսափիլ ազատ թարգմանիչ մը։ Ճաշակ չկայ, գրեթէ միևնոյն տողին մէջ թ իբ և իտ է բառերը տ իպ ա բ կը թարգմանելին։

Իմաստի սխալներ ալ քիչ չեն, որք ընդհանուր եկեղեցական մատենագրութեան անհմտութիւն կ'ենթադրեն։

Հ. Ա ս տ ո ւ ա ծ ա բ ա ն ո ւ թ ե ա ն թարգմանութիւն ըլլալը գիտնալով հանդերձ եթէ տակաւին իրաւունք ունի մեկը իբրև հեղինակութիւն նկատել, ոչ նրաւազ զարմանքով պիտի տեսնէ թէ մինչ զոյներով և բ ի յ ա կ ա ն բան մը դարձած է հայ եկեղեցին Սրբոյ Գրոց էջերուն մէջ։ Այս պարագան թեթև կերպով զգացուցինք արդէն. ուստի աւելորդ կը համարինք մանրամասնութեանց իջնել, մանաւանդ աւելի կը սիրենք լռել։

Մեր համառօտ տեսութիւնները վերջացնելով, սա տպաւորութեան տակ կը մնանք Տ. Մուրատեանց եպիսկոպոսին գրածը.—Սրբազանը կրնար գնահատելի ծառայութիւն մը մատուցանել հայ եկեղեցական մատենագրութեան, եթէ բոլորովին չպպաւինելով Վինէի, օգտուէր հայկական հայրաբանութենէն (պ ա դ ր ո լ ո ժ ի) որ չատ կարևոր առաղձներ կրնար հայթայթել նմանօրինակ գործի մը պատրաստութեան համար։ Ու, աւելին աղեկ կ'ըլլար, եթէ հայ-բողոքականք նոյնութեամբ թարգմանելով Վինէի երկը հրատարակէին Գայպլը Հաւուզէն, —այն ատեն տարակոյս չը կայ թէ ընթերցողք աւելի ղգուշաւոր կերպով պիտի կարդային՝ օգտւելով հանդերձ այն տեղեկութիւններէն, զորս այնքան կուռ և խիտ գիտցած է Ալէքսանդր Վինէ,—քան թէ հայ եկեղեցւոյ նշանաւոր եպիսկոպոս մը զայն թարգմանելու փորձութիւնն ունենար, և այն՝ ոչ օրինակելի կերպով։

ԿՈՒՆԵՒԻԿ ԱՔԵԼԱՑ

ՇՈՒՇՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԵԱՆՔԻՑ

Շուշու թեմական դպրոցի կեանքի մէջ տեղի ունեցան երկու փոքրիկ հասարակական «նշդքեր»։ Յունւարի 21-ին դպրոցի դահլիճում դրւեցաւ նոյն դպրոցի վար. կողմից «աշակերտական առաւօտ», որը, եթէ չեմ սխալւում, առաջինն է այդ հիմնարկութեան մէջ։ Դահլիճը ամբողջապէս լիքն էր հանդիսականներով, որոնց մեծ մասը դպրոցի աշակերտների ծնողներն էին։ Հանդէսը չատ հետաքրքրական էր կազմած և մեծ գոհունակութիւն պատճառեցներկայ եղողներին։ Նոյն թեմական դպրոցի վարչութիւնը յօգուտ այդ դպրոցի չքաւոր աշակերտների ուեց առ՝ ս 4-ին, պ. Խանդամիրեանի թատրօնական դահլիճում մի երեկոյթ, որ անցաւ թէ կենդանի և թէ ուրախ. ներկայացեցաւ 3 վօդևիլ, միջոցներին երգում էր թեմական դպրոցի քառաձայն խումբը և solo այդ խմբի ղեկավար թեմական դպրոցի երգեցողութեան նոր ուսուցիչ պ. Ս. Դէմուրեանը։ Երեկոյթը մեծ ոգեւորութիւն ունեցաւ նաև եկամուտի կողմից։ Թատրօնը լիքն էր։

Սակայն այս «նշդքերը» ուղիղ որ փոքրիկ են այն քանի խնդիրների հետ համեմատած, որ այս ուսումնական տարւայ սկզբից ժամանակ առ ժամանակ անանուն թերթերի մէջ են դառնում, չնորհիւ այն փոփոխութիւնների որ տեղի ունեցան այդ դպրոցում այս տարի։

Ըստ կանոնադրութեան, Ղարաբաղի թեմական դպրոցը կառավարում է հոգաբարձութիւնը, որի նիստերը կանոնաւոր են, երբ ներկայ են երկու հոգաբարձու և առաջնորդը։

Մի հետաքրքրական երեոյթ. համարեա միշտ այդ դպրոցը կառավարւել է երկու հոգաբարձուի, մնացածները միշտ ընտրւած լինելու համար։ Նախկին հոգաբարձութիւնը նոյնպէս de tacto կազմած էր երկու անդամներից, որոնք հեռացել էին 1888 թւի նոյեմբերի մէկից և դպրանոցը մնացել էր թեմիս ս. առաջնորդի անմիջական կառավարութեան տակ։ Թէ ինչ տարօրինակ խառնուածքներ էր տիրում դպրոցում այդ տարին և ինչպիսի անհանգամանքներ էր հանդիպում դպրոցը, այդ չուշերիներիս լաւ է յայտնի։ 1889 թ. սեպտեմբերի սկզբում կայացաւ այժմեան հոգաբարձական ընտրութիւնը։ Նորընտիր հոգաբարձութիւնից եկ գործին կան միայն երկու հոգի. Ա. Բաբախանեան և Գ. Տէր-Մկրտչեան, մնացածները հեռու էին իրանց պահում արդարանալով «սրբազանի հետ չունենք» խոսքերով։ Այդպէս ուսումնարանի գործերը կառավարել են 3 հոգի չարունակ, այդպէս էլ սկսւել է այս ուսումնական տարին, երբ հոգաբարձութեան այդ կազմութիւնը ընտրել է և հրաւիրել նոր տեսուչ։ Ուրեմն, ըստ կանոնադրութեան, հոգաբարձութիւնը իր իրաւունքից դուր

չի եկել Ի հարկէ աւելի լաւ կը լինէը որ բոլոր հոգաբարձութիւնը հաւաքւէը բայց երբ նրանք չեն դալիս, ինչ կարելի էր անել։

Գործերի այսպիսի դրութեան մէջ, երբ հասարակութեան ազդեցիկ մարդկանցից մի քանիսը դործից հեռանում են «սրբազանի հետ չունենալու» պատճառով, իսկ մի քանիսն էլ՝ բուրժուական մասը՝ այն պատճառով որ չահ չունեն այդ ուսումնարանից, որովհետև նրանց համար ըէալական դպրոցը կայ. ինչ է մնում անելու. 1) քննել այդ թեմում տիրող մչակական խռովութիւնների պատճառը որ հոգևոր բարձր իշխանութեան գործն է. 2) առայժմ՝ մինչև այդ քննութիւնը վերկել վանդից ուսումնարանական գործը, որի գոյութիւնը անհրաժեշտ է բուն ժողովրդի զաւակների համար։ Ներկայ հանգամանքներում այս վերջին քայլը-ուսումնարանի գոյութիւնը վերկել վանդից—բարոյապէս պարտաւորած են անել աւելի թարմ և հակացող ոյժեր. այդ է պատճառը որ գործի մօտ են մնում երկու երիտասարդ և ինտելիգենտ հոգաբարձուներ։ Եթէ սրանք հեռանային, ուսումնարանի կառավարութիւնը անմիջապէս կ'ընկնէր կրկին միմիայն ս. առաջնորդի ձեռքը, իսկ անցեալի փորձը բաւականաչափ ցոյց տւեց, թէ որչափ այդ ցանկալի է։ Ուրեմն միակ բնական ելքն էր այն, ինչպէս է այժմ. մնում է որ նոր կաթողիկոսը նշանակի մոնրամսան քննութիւն թեմիս գործերի և խնդիրը պարզելուց յետոյ՝ նոր հոգաբարձական ընտրութիւն։

Այժմ թեմական դպրոցի ուսումնական մասի կառավարութիւնը գտնւում է տեսչի ձեռքում, որ ուսուցչական ժողովի հետ համերաշխութեամբ այդ մասը առաջ է տանում, իսկ տնտեսական մասը գտնւում է ընտրւած դանձապահ հոգաբարձի ձեռքում։ Ապացոյցներից մէկը, որ դպրոցի տնտեսական դրութիւնը օր ըստ օրէ լաւանում է՝ այն է, որ 1889—90 ուս. տ. մուտք էր 8,527 ր. 50 կ., մինչդեռ 1891—92 ուս. տ. 13 հազար, իսկ այս տարի լինելու է մօտ 14 հազար։ Մեզ կասեն թէ 1887—88 թւականին մուտքն էր 17,249 ռ.։ Այս, բայց մի մոռացէք որ այն ժամանակ հոգաբարձութեան ձեռքումն էր մօտ 43,000 դեսեատին վանքապատկան կալւածքներ, որոնց եկամուտն էր 2679 ռ. մի մոռացէք որ այս թւին գինւորագրութեան պատճառով մեարիքականների պահանջը տհաճին էր։ Հանէք այդ երկու աղբիւրներից մէկը՝ ամբողջապէս, որովհետև Մակար կաթողիկոսի հրամանով այդ կալւածքները յանձնւեցան կօնսիստօրիային, իսկ միւսի բացառիկ կողմը և դուք կը ստանաք այն եկամուտը, որին հասցրել է ներկայ հոգաբարձութիւնը։

Անանուն թերթում ակնարկ կար մի հոգաբարձի վրայ, որի ուշիկը ուրիշ ծառայութիւնից իրրև թէ 35 ռ. է, ուրեմն (ըստ լօգիկայի և կանոնների յիշեալ խմբագրութեան) նա չի կարող լինել հաշիւների մէջ մաքուր... Այդ անամօթ ակնարկի մասին չ'արժի էլ երկար խօսել քանի որ յիշեալ թերթում է լոյս տեսել, բայց քննեցէք դպրոցի ամբողջ գոյութեան պատմութիւնը և տեսէք «տնտեսական զեղծումները» երբ էին գագաթնակէտին հասել, այդ մէկ, և երկրորդ՝ եղել է արդեօք երբ և իցէ այնպիսի կանոնաւոր հաշւապահութիւն, ինչպէս է այժմ։ Առաջ դանազան միջոցներով հարստացած մարդիկ՝ տգէտ և նիւթապաշտ ժողովրդի մէջ դիրք ստանալով, իրանց ձեռքն են գցել ուսումնարանի տնտեսական մասը, որը կառավարել են այնպէս, որ ուսումնարանի դանձարանի «նաղդ» փողերը դրել են իրանց գրպանում, իսկ գրպանից՝ անյուսալի պարտամուրհակները դանձարանում և այդպիսով այն մուրհակ ուղղները ուսումնարանին են դարձել պարտ... Այժմ այդ թղթերի կապոցը՝ բացի պատմական նիւթից ոչինչ չի ներկայացնում։ Ահա մէկը այն բազմաթիւ օրինակներից, թէ ինչպէս էր կառավարւում դպրոցի տնտեսական դրութիւնը առաջւայ ժամանակներում, որ այժմ նախանձելի են անւանում...

Բաւական է վերջապէս հասարակութիւնը համարել մի անչափահաս մանուկ, որին անհրաժեշտ են միշտ վերահսկու-բարերարների և մամոնայի երկրպագուների խնամատարութիւնը. նա չափահաս է և թող ինքը ուշադրութիւն չը դարձնելով վայրահաչ դատողութիւններին՝ լրջութեամբ ծանօթանայ իր գործերի և իսկական անկեղծ գործիչների հետ և ինքը վճռի իր անելիքը։

ԳԻՏԱԿ

ՊԱՐՍԿԱՀԱՅՈՑ ԻԳԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Թաւրիզում, ինչպէս յայտնի է, հայերը (մօտ 800 տուն) բնակւած են երկու թաղում—ներքին և արտաքին, որոնց իւրաքանչիւրն ունի իւր երկսեռ դպրոցները, 150—200 աշակերտ-աշակերտուհիներով։ Ի դէպ, այս քաղաքում Ամերիկայի բողոքական միսիօնարներն ունին նոյնպէս երկսեռ դպրոցներ 80—100 աշակերտ և աշակերտուհիներով, որոնց մասին յետոյ։

Եթէ չենք սխալւում, մօտ 10 տարի է, որ Թաւրիզում բացւել է իգական դպրոց, բայց այդքան ժամանակամիջոցում դեռ ևս ոչ մի ընթացաւարտ չէ տւել Թաւրիզին։ Այդ դպրոցներում աւանդւում են կրօն, թւաբանութիւն, հայոց լեզու, ձեռագործութիւն և այլն։ Թէ ինչու է առաջադիմութիւնը կաղում այդ դպրոցներում, ի միջի այլոց, պատճառներն այն հանդամանքն է, որ մի վարժուհի չարունակ 3—4 տարի չէ պահւում այդ դպրոցներում, միշտ փոփոխելով ուսուցչուհիները՝ դրանով փոփոխւում են նաև դպրոցների ուսումնական ուղղութիւնները։ Դալիս է մի ուսուցչուհի և իր կերպով սկսում է պատաւանդութիւնը մինչև այնքան ժամանակ, որքան որ ինքն մնում է նոյն դպրոցում. հէնց որ դուրս է գալիս որ և է պատճառներով, իր հետ դուրս են գալիս և իր բոլոր կարգ ու կանոնները, դաստւորութեան մեթոդը և այլն։ Աշակերտուհիք դպրոցից չատ քիչ բարոյական և մտաւոր սնունդ են ստանում, որովհետև նրանք դպրոցից դուրս տալում են այնպիսի ընկերային, ընտանեկան և հասարակական պայմանների մէջ, որոնք մաքուր բնաւորութեան կազմակերպւելուն չեն նպաստում, մանաւանդ իսկական սեռի այս կրթարաններն՝ իրանց ներկայ կազմակերպութեամբ ու ծրագրով, բոլորովին անհամապատասխան են պարսկահայերի հասարակական և ընկերական ու ընտանեկան ներքին պահանջներին։

Այս բոլոր պարագաների հետևանքն այն է, որ բացի նրանից, որ այդտեղ յաճախող սանուհին ցմահ մնում է նոյն անկիրթ, անտաչ և բարոյականից (morale) զուրկ թաւրիզեցի աղջիկը,—նա մի անտանելի բեռն է

լինում այն ընտանիքի գլխին, ուր նրան վիճակւում է ապագայ հարսնացւի և տոնտիկնոջ կոչումը։ Աննպատակայարմար կազմակերպութիւն ունեցող դպրոցն է արտադրում այսպիսի լատմաճուկներ, որոնք իրանց անտանելի, դառը, նանրասէր և պահանջող բնաւորութեամբ, տոնտիկնական կոչման անընդունակութեամբ և անմայրական կամ դաստիարակական ասպարէզին անյարմարութեամբ ժողովրդի մէջ առաջ են բերում տառնութիւն դէպի իգական սեռի կրթութեան գործը։ Ժողովուրդը տեսնում է, որ դրանցից դուրս եկած կիսաւարտ, թերուս և գոռոզ երիտասարդուհին արհամարհում է իր ընտանեկան չրջանը, իր ապէս ծնողաց վրայ ծիծաղում է, նա իրան համարում է Պարիզեան dame, ատրութիւն է համարում տանը օգնել իր մօրը տնագործական զբաղմունքների մէջ և այլն, այս բոլորը տեսնելով նա գալիս է այն եզրակացութեանը, թէ դպրոցը փչացնում է երեխաներին...

Այդ կենտրոնից՝ Թաւրիզից դառնանք դէպի գաւառները և գիւղերը։ Ահա գիւղական—իգական դպրոցի մի պատկեր։ Գետնի երեսի վրայ չինւած, սև ցեխով բռած (սւաղած) կիսալոյս քառանկիւնի սենեակ և կամ մի գիւղական խրճիթ, որի յատակի վրայ տարածած են մի քանի եղեգնահիւս փսխաթ։ Սենեակը մտնողի վրայ թողնում է պաբսկական գարշահոտ բանտերի տպաւորութիւն։ Մի անկիւնում, փսխաթի վերին կողմում, նըստած է մի քօղարկւած հարս, որի չուրջը խառն նստած են լինում մեծ ու փոքր աղջիկներ։ Հարսի-վարժուհու աջ կողմում ընկած են մի քանի հատ ու բաւական չոր ու դալար ճիպոտներ, որոնց պաշտօնն է մոռացողին յիշեցնել «արքայութեան ճանապարհ», իսկ ձախ կողմում սանուհիների կօշիկները, ժամագրքեր, նարեկներ և սաղմոսներ անկարգ, խառն ի խուռն, իսկ մերթ ընդ մերթ երևում են պօլսկոյց հռչակաւոր «Քերականները», որոնց ճակատին դրոշմած է «Խաչ օգնեա ինձ» վերտառութիւնը։ Աչակերտուհիները բարձր ձայնով կարդում են, մէկը նարեկի վրայ, միւսը՝ ժամագրքի, երրորդը՝ սաղմոսի և այլն։

Հարկաւոր է արդեօք այստեղ խօսել այն հետևանքների մասին, որոնք ակներև կերպով ստացւում են այդ կրթարաններից, որտեղ պատրաստւած և ժողովրդի մէջ գործելու ընդունակ ուսուցչուհիները չրկան։ Մինչդեռ գաւառացիք կամ գիւղացիք աւելի են սիրում, յարգում իրանց գաղափարապաշտ գործիչներին, քան թէ քաղաքացիք։

Այս անչարժ, սպանիչ, անպատճառանալի դրութիւնից դուրս գալու և ներկայ իգական սեռի կրթութեան գործին մի դարման անելու համար, մեր կարծիքով պէտք է հիմնականապէս փոփոխել կենտրոնների իգական դպրոցների թէ ներքին և թէ արտաքին կազմակերպութիւնը, պէտք է լայնացնել և ընդարձակել դրանց պրօգրամը և Կովկասից հրաւիրել գործին հմուտ, փորձառու, սրտացաւ և խիստ բարոյականի տէր ուսուցչուհիներ, մի քանի՝ 5—6 տարւայ պայմանաժամով։ Գաւառական քաղաքներից և գիւղերից բերել տալ մի մի աղջիկ, ի հարկէ ընդունակներից, այդ դպրոցներում պատրաստել գիւղական ուսուցչուհիներ լինելու և ընթացքն աւարտելուց յետոյ, ուղարկել իրանց հայրենիքը, այնտեղ գործելու համար։ Կենտրոններում այդ աղջիկների համար հարկաւոր է առանձին բնակարան գիշերօթիկ դպրոցի կանոնադրութեամբ, որտեղ ամեն հարկաւոր պիտոյքները հոգացւին նոյնպէս դպրոցի վարչութիւնից։ Այդ բոլորի ծախքը երկու մասի բաժանելով, մէկ մասը կարելի է ապնուհիների հայրենիքից ժողովարարութեամբ հոգալ, իսկ միւս մասը կենտրոնների եկեղեցական և դպրոցական գանձանակից։ Մեր առ այժմ բաւականանալ 10 հատ բերելով գաւառի մեծ գիւղերից, դրանց համար, բացի ուտման վարձից, տարին maximum հարկաւոր է 20 թուման (60 ր.) ապրուստի և այլ կենսական պիտոյից, որը մի մեծ դուռար չէ. իսկ ուտման վարձը, դասագիրքը և դպրոցական այլ պիտոյքները կարող են հոգացւել և դպրոցի վարչութիւնից ձրիաբար։ Աղջիկները կարող են ապրել նոյն իսկ վարժուհու հետ նրա անմիջական հսկողութեան ներքոյ, որը միաժամանակ թէ մայր է նրանց համար և թէ դաստիարակ—վարժուհի։ Սակայն փորձը ցոյց կը տայ, թէ ինչ ուղղութիւն պէտք է տալ գործին ապագայում։

Այս ձեռնարկութեան օգտաւէտութիւնը լաւ ըմբռնած լինելով՝ Ամերիկայի միսիօնարները իրանց այժը և ոչ մի նիւթական ապահովութիւն չեն խնայում իրանց դպրոցներն առաջ տանելու համար։ Նրանք ունեն և երկու ծաղկոց կամ մանկական պարտէզ, որը օրինակի տարը ու կարգով, ամեն տեսակ հարկաւոր առարկաներով հարուստ լինելով՝ նախանձելի դրութիւն ունի։ Իսկ միւս դպրոցները,—ազգականը Լիլլաւայում, իսկ իգականը Ներքին Թաղում—միջնակարգ դպրոցի ծրագիրը ունին, և ընթացքն աւարտող երիտասարդները ցրւում են գաւառներում և գիւղերում, նոյն միսիօնարների իրաւասութեան ու կառավարչութեան ներքոյ հիմնում են գիւղական դպրոցներ, որոնցից հինն այժմ Սալմաստում, Որմիայում, Մարաղայում, Խոյում և այլն։ Սակայն այդ դաւանական խնդիրը մի չինական պատ է քաշել նրանց և մեր ժողովուրդի մէջ, մանաւանդ որ նրանք անպարագլխի, կենդրոնախուսութեան պատճառ են դառնում հայերի մէջ։

Թ.

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Թէհրանի Ազգային Ուսումնասիրաց Ընկերութեան ներկայ հոգաբարձութիւնը՝ որի դէմ Ս. սուորագրութեամբ մի յօդւած կար «Նոր-Կեանք» 196 թւի մէջ, իրան պարտականութիւն է համարում այդ յօդւածագրի տրած յայտնի պարսպարտութիւնները ջրելու վրայով իրողութիւնները ինչպէս են և եղել են. և ոչ այնպէս, ինչպէս կամենում է ցոյց տալ անձնական կրքից դրդւած մի յօդւածագիր։

Պարոն Ս. իր յարձակումների մասնաւոր առարկան է դարձրել Հոգաբարձութեանս, առհասարակ և Ազգային դպրոցների տեսուչ Յովհաննէս խան Մասեհեանցին, բայց թէ ինչքան իրաւացի են նորա ամբաստանութիւնները, այդ թողնում ենք ընթերցողի դատողութեան, երբ նա կը ծանօթանայ խնդրի երկու կողմերի հետ էլ։

Տեսչի ընտրութեան մասին պարոնը երևի անտեղեակ է, կամ այդպէս է ձևանում. ընկերութեան կանոնադրութեան 36-րդ յօդւածին, որի համեմատ Տեսուչը ընտրւում է ոչ թէ ժողովրդից կամ ընկերութեան ընդհանուր ժո-

Նկար I.

Նկար II.



Նկար III.

ղովից, այլ ուղղակի Հոգաբարձական ժողովից. ուստի Յովհաննէս խան Մասեհեանցը Գործադիր ժողովի 12 յունուար 1892 ընդ № 2 արձանագրութեան համաձայն և կանոնագրութեան 36րդ յօդուածի հիման վրայ՝ տեսուչ ընտրեցաւ, երբ բժիշկ Բարսեղեանը իր անձնական գործերի պատճառով այլ ևս չը կարողացաւ վարել այդ պաշտօնը և ոչ թէ ինչպէս պարոն Ս. ասում է տեսչութիւնը խլեց նորա ձեռքից։

Դալով պարոն Մասեհեանցի Աահնապետ լինելու խնդրին, այստեղ նոյնպէս յօդուածդիրը միևնոյն կամաւոր տգիտութիւնն է ձևացնում. կանոնագրութեան 10-րդ յօդուածի համաձայն, տաճնապետը ընտրւում է ոչ թէ ժողովրդի կողմից, այլ Գործադիր ժողովի իւր միջից։ Երբ պարոն Հ. Առաքելեանը 8 ապրիլ 1892 № 8 նիստի մէջ ներկայացրեց իւր հրաժարականը (պանդան գործերի պատճառաւ պարտաւորւած լինելով հեռանալ Թէհրանից) նորա ներկայութեամբ և գործադիր ժողովի միաձայն հաւանութեամբ տաճնապետ ընտրւեց Յովհաննէս խան Մասեհեանցը, և Հոգաբարձութիւնս լաւ հասկանում է որ ուրիշ ոչինչ, եթէ ոչ անձնական չահերից թելադրւած մի գրիչ կարող էր այդպէս ղրպարտել մի պարոնի ընթացքը, որ մազաչափ չի չեղուել ընկերութեան կանոններից։

Պարոն Ս. առաջ տանելով իր խօսքը, յանդգնում է ասել որ Հոգաբարձութեանս ներկայ տաճնապետի պաշտօնավարութեան ժամանակ պաշտօնից հեռացւել են 8—10 ուսուցիչներ, այս խօսքը ուրիչ ոչինչ չէ եթէ ոչ մի յանդուգն ստութ. որովհետև վերոյիշեալ ժամանակամիջոցում երկու ուսուցիչ միայն (մէկ վարժապետ և մէկ վարժուհի) հեռացւել են ուսումնարանից, և այս դէպքում էլ վարժուհին հեռացնելու ոչ մի փափագ չունէր Հոգաբարձութիւնը և պիտի չարունակէր պահել նրան պաշտօնի մէջ, եթէ այդ վարժուհին վերոյիշեալ վարժապետի ամուսինը չը լինէր, իսկ թէ ինչ պատճառի համար Հոգաբարձութիւնը պարտաւորւեց հրաժարեցնել վարժապետին, այդ մասին դեռ Հոգաբարձութիւնը յարմար է դատում լռութիւն պահել, մինչև որ բոլորովին պարտաւորւի այդ դէպքն յառաջ բերող անախորժ հանգամանքները հրատարակութեան տալ։

Իսկ դալով այն կէտին, որով պարոն Ս. ուզում է այնպէս հասկացնել ընթերցողին թէ Աահնապետը հեռացրել է այս ուսուցիչներին անձնական ոխի պատճառաւ, այսքան բաւական ապացոյց է որ երբ այդ վերոյիշեալ ուսուցիչները գործադիր ժողովի միաձայն հաւանութեամբ հեռացւեցան պաշտօնից, պարոն Մասեհեանցը երկու անգամ ժողովի մէջ ջերմ պաշտպան հանդիսացաւ այն խնդրին, որ նրանց պէտք է ճանապարհածախք վճարել. և միայն ժողովի մեծամասնութեան միաձայն մերժման առաջ պարտաւորւեց տեղի տալ, ինչպէս հաստատում են ժողովիս արձանագրութիւնքը։

Ցօդւածի մէջ կայ և մէկ ուրիշ կէտ, որ բաւական կասկածելի է դարձնում նրա Թէհրանից գրւած լինելը, այն է ուսումնարանի բացւելու թւականը. եթէ իսկապէս յօդւածը Թէհրանից գրւած լինէր, պարոն յօդւածագիրը կը մանար որ ուսումնարանը այս տարի բացւեց սեպտեմբերին և ոչ թէ նոյեմբերին, և այդ էլ չնորհիւ նրա վրպարտած անձնաւորութեան, որ յանձն առաւ ձրիաբար դասեր աւանդել ուսումնարանում մինչև ուսու-

ցիչների հասկլը, որոնք քոլերայի պատճառաւ միայն ուշացել էին։

Հոգաբարձութեանս համար հեշտ է պարոն Ս. ի յօդուածը մանրակրկիտ ուշադրութեան առնելով մի ըստ միոջէ մերկացնել ամեն նախադասութեան մէջ դտնւած անճշտութիւնն և զրպարտիչ ակնարկութիւնքը, բայց այն ժամանակ չավազանց նշանակութիւն տւած կը լինէր նրան, որ աւելի արժանի է լուծութեան արհամարհանքին, և այս քանի դլխաւոր կէտերին միայն նրա համար պատասխանեց, որ Նոր-Նարի ընթերցողները վատ դատաստանի չ կարողանան տեղւոյն Հոգաբարձութեան և նրա ատենապետի վրայ մի մարդի խօսքով, որ իր տասածների տակ իր անունը տպագրելու քաջութիւնը չունի։

ԹԱՏՐՈՆ

Նամակ խմբագրին

«Տարազի» անցեալ համարում տըպւած էր մի յօդւած «35 ամեակ էր արդեօք» վերնագրով, որի կարդալու ժամանակ յիշեցի թէ մի տեղ կարդացել եմ հայկական առաջին ներկայացման մասին և փնտրելով գրքերս մէջ գտայ մի գիրք «Մ/քայէլի Պատկանեանց Պատասխանիք Յակոբայ Կարինեանց գրւածքի դէմ» 1860 թւին տպւած, որի մէջ գրւած է հայկական ներկայացման մասին։ (Տես նոյն գրքի էջ 5 և 6)։

«Անցեալ 1859 թւի կիսումը Թիֆլիզումը ծնաւ փոքրիկ տնային թատրոն Հայոց։ Սրա հիմքը դրին էս տեղի Հայ ուսանող երիտասարդները, ներկայացնելով «Մեղու-Հայաստանի» անունով լրագրում տպած Տէր-Մատէոսեան քահանայի Մանդինեանց հեղինակութիւնը, որ էր խօսակցութիւն Բաբաբէի և Պատրոսի իրանց աղջկան հայերէն ուսում տալու համար։ Ես չեմ կամենում էս տեղ ընդարձակ խօսել էս լրագրական յօդւածի արժանաւորութեանց վրայ, որովհետև իմ ներկայ առարկայից դուրս է, վասն որոյ թողնելով նրա քննութիւնը ուրիշներուն, էսքան միայն յայտնում եմ իմ կարծիքը, որ էն յօդւածը չատ պատւական և ազգօգուտ նպատակ ունի իրա բովանդակութեան մէջ և չատ մեծ օգուտ բերում, պատճառ դառնալով Թիֆլիզոյ Հայոց տնային թէատրոնի հիմնակոթռնը։

«Ուրախանալով թէատրոնի մեր քաղաքումը ծագման վրայ, ես յանձն առի բոլոր դժւարութիւնները և ըրեցի նրա բնմի համար չորս հատւածներ, որոնք են 1. «Մէջի մարդ» կամ «Մոլիքուլ» կօմեդիա-վոդևիլիլ։ 2, «Մէկի նշանած, մլուսի կին» կօմեդիա-վոդևիլիլ։ 3. «Սատանի վայ» դրամա և 4. «Ընկեր հարուածած» դրամա, որոնք նոյն ուսանող—երիտասարդները անցեալ տարւայ վերջին և էս տարւայ առաջին կիսումը ներկայացրին ուրթն անգամ և բոլոր բազմաթիւ այցելուքը մեծ հրճւանքով դովեցին թէատրոնի սկիզբը»։

Էսպէս սկսւեց Թիֆլիզոյ Հայոց առաջին թէատրոնը և կարող է չարունակւել և օր ըստ օրէ կատարելագործւել, եթէ լուսաւորեալ բարեմիտ հայազդի ուսումնականները և ճշմարիտ ազգասէրները չեն խնայիլ իրանց գործակցութիւնը և ձեռնատւութիւնը»։

Վկերոյիչեալ կտորից երևում է, որ 1859 թւի կիսումը եղել է տնային փոքրիկ թատրօն, իսկ կանոնաւորապէս սկսւել է 1859 թւի վերջերից, ներկայացնելով Միքայէլ Պատկանեանի 4 պիէսաննները։

«Կռունկի» 1860 թւի յօդւածներից էլ հաստատւում է մեր վերոյիչեալ կարծիքը Հայոց առաջին ներկայացման մասին և նոյնպէս «Մեղու-Հայաստանի» «Մի քանի խօսք 1859 թւի դեկ. 24 Հայոց լեզուն Թիֆլիսումը ներկայացրած թէատրոնի վրայ» յօդւածով։ (Տես «Մեղու-Հայաստանի» 1860 թ. № 10 և 11.)։

ՋՍ.Ր. Տ.

—

ՄԵՐ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Բուխարայի Էմիր՝ Սէյիդ Ա. Հադ-Խան-Բահադուրը

Ամսիս 11-ին ժամանեց Թիֆլիս Բուխարայի Էմիր Սէյիդ Ա. Հադ-Խան-Բահադուրը, վերադառնալով Պետերբուրգից։

Դա մօտաւորապէս 35 տարեկան, բարձրահասակ տղամարդ է. գեղեցիկ, մի քիչ թուխ դէմքը պատած է սեւ մօրուքով, փոքրիկ բեխերի տակից երևում են բարակ, եռանդագին են սեղմւած շրթներ։ Սեւ և մեծ աչքերի նայւածքը թափանցիկ է և սուր։ Ամբողջ դէմքը ցոյց է տալիս բնաւորութեան ամրութիւն։

Այս առաջին անգամը չէ, որ Էմիրը ճանապարհորդում է Ռուսաստանում։ 1838 թ. նա ներկայ է եղել Մոսկւայում կայսերական գոյգի թագադրութեան. վերջին ուղևորութիւնը ոչ մի քաղաքական նպատակ չունի։ Նրան մեծ պատւով ընդունեցին մայրաքաղաքում և նրան շնորհւած է նոր աստիճան-վսեմափառութիւն և նոր շքանշաններ։ Չափազանց գոհ կայսեր իրեն ցոյց տւած ընդունելութիւնից, Բուխարայի հրամանատարը վերադառնում է իր երկիրը անկասկած աւելի համոզւելով այն կարծիքի մէջ, որ նա յայտնում էր իր առաջին ճանապարհորդութիւնից յետոյ։ Տաշքենտում, թէ աչքով տեսաւ Ռուսաստանի ահագին ոյժերն ու միջոցները։ Հաստատւած լինելով իր աթոռի վրայ ռուսաց կայսրից, նա կարիք չունի մի որ և է կուսակցութեան վրայ յենւելու իր իշխանութիւնը պահպանելու համար։

Այժմեան Բուխարան, որ մօտաւորապէս 2 միլիոն ժողովուրդ ունի, կառավարւում է միահեծան էմիրի (հրամայող) ձեռքով։ Զինւորական տեսակէտով Բուխարան թոյլ տէրութիւն է։ Նա ունի 10 հազար կանոնաւոր հեծեակ զինւոր, մի 200—300 հին թնդանօթ և պատերազմի

ժամանակ կարող է սպառազինել 30 հազար արտակարգ հեծեալներ։

Ներկայ էմիրը պատկանում է ուզբէկների ցեղին, որ 1500 թ. ի վեր հ.համարեա թէ առանց ընդհատման երկրի կառավարող դասն է կազմում, և ծագում է Մանգիտ անից, որ 1784 թ. տիրացաւ գահին։

Մուզաֆֆար էդդինը վախճանելուց յետոյ(1885 թ.հոկտեմբերի 31-ին) գահ բարձրացաւ նրա որդին — ներկայ էմիրը։ Մի-ւս որդին՝ Սէյիդ Մանսուրը սովորում է Ռուսաստանում՝ Պաժեսկի կորպուսում։

—

Ղօշուն-դաշ

Ղարաքլիսից (Երևանու նահանգ, Ալէքսանդր. գաւ.) երկու վերստ հեռաւորութեան վրայ գտնւում է Ղօշուն-դաշ (զինուորների քարեր) կոչած տեղը, որի տարածութեան վրայ սփռւած են տեղ-տեղ զանազան ձևի ու չափսի կանգնած մեծ քարեր։

Ժողովրդական աւանդութիւնը վկայում է, որ սկզբում այդտեղ ապրում էին անասելի ոյժի տէր հսկաներ։ Մինչև անդամ տեղական բնակիչները ցոյց են տալիս նրանց բնակարանների, բակերի, գերեզմանների և պարիսպների, տեղը։ Ղօշուն-դաշի ամեն տեղերում այժմ են ընկնում մանր քարակոյտներ, որոնք օղակաձև չրջապատած են բարձր կանգնած քարերով (նկ. 1.)։ Այդ քարերը սովորաբար սրածայր են։ Նրանցից մի քանիսը սաժէնից աւելի երկայնութիւն և մինչև երկու արշին լայնութիւն ունեն։ Քարերի մէջ կան մէկ կամ մի քանի ծակեր։ Այդ քարէ չըրջանները ունին իրանց դիամետրով մօտաւորապէս 5—12 սաժէն, իսկ իրրև կենդրօն ծառայում են իւրաքանչիւրի համար մէջ տեղը ժողոված քարակոյտերը։ Իւրաքանչիւր մի չրջանում կայ մէկ քարակոյտ։ Բայց կան և առանձին կանգնած քարակոյտեր։ (նկ. 2.)։ Մի քանի քարերի տակ կան աղէտների, փորսողների և չաղկալների որջեր, որոնց առաջ կիսած են մարդկային ոսկորներ և կաւէ սանի կտորներ։

Բնակիչները ասում են, որ քարակոյտերի տակ ամփոփած են զօրապետների, իսկ կանգնած քարերի տակ զօրքերի դիակները։

Ղօշուն-դաշում կան մի քանի քարտաձևներ (նկ. 3.) կազմած անապին սալ քարերից, որոնցից մի քանիսը գտնւում են հողի մակերևոյթի վրայ, միւսները նրա մէջ։ Քարտաձևների յատակից մինչև առաստաղը երկու արշին է, իսկ պատերի տարածութիւնը զանազան չափսի է։ Փանդելու ժամանակ երևում էին մարդկային ոսկորներ։

—

Չանախչի գիւղի աւերակներից Վազգան Գ. դասեր գերեզմանը։

«Կուսանաց Անապատ» վանքը գտնւում է Չանախչի գիւղում մէկ առանձնապէս բարձրացած բլրի վրայ, որի ստորոտով հոսում է մի անանուն գետակ, կազմելով մի քանի փոքր և ջրվէժներ։ Վերջիններով օգտւում են գիւղացիները, չինելով նրանց մօտ իրանց ջրաղացները։

Հարաւային կողմից, բլուրը պարսպի պէս միանգամայն իջնում է դէպի գետակը, իսկ արևելեան կողմից կազմում է բաղմաթիւ ճեղքեր, որոնք բաժանում են բլուրը մի քանի վտանգաւոր մասերի։ Արևմտեան կողմը չինած է հին ամրոցի կամարակապ դռներին, որոնց չարունակութիւնը կազմում է «քաջքատուն» (դևերի տուն) կոչած մութ քարանձաւը։ Գիւղը միացած է վանքի հետ բաւականին մատչելի ճանապարհով։

Վանքի կերտման ժամանակը և պատճառը մեզ ճիշտ յայտնի չէ, բայց ինչպէս ժողովրդական աւանդութիւնը վկայում է, վանքը չունել է Աղանից Թադաւոր Վաչագան երրորդը, որը ընդունելով մահմեդականութիւն, կըրկին զղջաց և հիմնեց այդ վանքը, ուր և անցկացրեց իր կեանքի վերջին օրերը աւետարան կարդալով։ Այդ ժամանակից և Չանախչի կոչած գիւղը կոչեց Աւետարանոց, այսինքն գիւղ, ուր աւետարան է պահած։

Հին ժամանակ վանքը ծառայում էր կուսանաց ապաստարան, ուր նրանք անց էին կացնում իրանց կեանքը աղօթքներում և միանման զբաղմունքներով, բայց այդ հովվերգութիւնը վերջացաւ Աղա-Մահմետ-չահի արշաւանքով՝ 1795 թ.։ Աւանդութիւնը պատմում է, որ երբ պարսից սարազները (զինուորները) գիւղը մտան, կոյսերը փախան մօտակայ անտառը։ Նրանցից միայն մինը մնաց կիսատ աղօթքը վերջացնելու, երբ նա վանքից դուրս եկաւ իր քոյրերի օրինակին հետևելու. գլխին չողաց սարազի դաշոյնը։ Ցաչող րոպէից օգտւելով, նա վազեց դէպ բլրի ծայրը և սուրը երրորդութեանը ու Աստուածամօրը իրեն օգնութիւն կանչելով, ընկաւ բլրից ցած և աներևոյթ զօրութեամբ անփորձ հասաւ գետին ու թագնւեց անտառում։ Այս արշաւանքի ժամանակ, վանքի այլ թանգագին իրեղէնների հետ ի միասին գերւած էր և արծաթապատ կենաց փայտի մի մասը, բայց վեց ամսից յետոյ, ըստ աւանդութեան, խաչը ազատւի գարձաւ և գերութիւնից ազատւելով, եկաւ վանքը և կրկին ընդունեց իր նախկին ձևը։

Այլ աւանդութիւնը պատմում է, թէ ամեն տարի Զատկի կիրակիին ինքնակամ գալիս էր իրր երկնքից առաքւած զոհ—մի այծեամ և մեկնում էր իր վիզը պատարագիչների առաջ, բայց ժողովրդի մեղքերի պատճառով Աստուած դադարեցրեց իր ողորմութիւնը։

«Կուսանաց Անապատ» վանքը չինւած է տեղական տալած քարից, տեղ-տեղ լայն արանքները կրով սւաղած, և նման է հին այգունիքի, երկու կողմից իջնող հասարակ տանիքով, որի վրայ սոճում են մամուռ, խոտ և վայրենի վարդենու թփեր։

Տանիքի արևելեան կողմում ամրացրած է մի քար, որի վրայ քանդակւած է խաչ։ Վանքի յատակը խաչաձև է պատերի մէջին երկայնութիւնն է 12 արշին, իսկ լայնութիւնն ութ։

Վանքի արևմտեան կողմում մուտքն է և այդտեղ թաղւած են մի քանի բարեբաշտ կոյսեր և մելիքներ։ Այստեղ գտնւում է ի միջի այլոց, ինչպէս ասում են և Վաչագան Թադաւորի դստեր գերեզմանը, որի գերեզմանաքարը ներկայացրած է երրորդ նկարի մէջ։ Հիւսիսային կողմում՝ մի առանձին չինութեան մէջ ապրում էին քոյրերը։ Հարաւային պատը ունի մի, իսկ արևելեանը երեք անչուք պատուհաններ, որոնց միջով անցնում է արեւ-լոյսը։ Ընդ-



Նկար Ա. Մ. Գանձակյանի

հանուր պատի մէջ չինուած սեղանի մօտ գտնուում են երկու խորաններ։ Սեղանի վրայ ամրացրած է Աստուածամօր հին պատկերը։ Տաշած քարերից կառուցուած 2 սիւները միանում են աղեղնաձև կամարով, որը՝ ինչպէս և սիւներից երկու կողմ բարձրացող կամարները, չինուած է հարթ քարէ դօտիներից և ծածկուած են բազմաթիւ գրերով, որոնք չատ դժուար են որոշուում, թէ մթութեան և կամարների բարձրութեան և թէ հնութեան պատճառով։ Վանքը արտաքուստ զարդարուածէ խաչաքարերով և դեղեցիկ փորուածքներով։ Ամբողջ չինութիւնը մօտերքս նորոգուել է և դրուել է նոր դունագլուխ քար։

Հին ժամանակ վանքի չուրջը պատած էր բարձր քարէ պարիսպով, այժմ մնացել են նրանից ողորմելի հետքեր։

«Կուսանաց Անապատ» վանքը, սկզբից մինչև այսօր չի ծառայել իբր ժողովրդական եկեղեցի, այժմ միայն երբեմն նրա պատերի մէջ մաղթանքներ են կատարուում Աստուածուց ուղարկուած դժբախտութիւններից ազատուելու համար, այն է. վարակիչ հիւանդութիւններից, մորեխից, գայլի մկներից և այլն։

Վանքի առաջ գտնուած փոքրիկ հրապարակը ծօն օրերին, ուրախութեան տեղ է դիւղական երկսեռ երիտասարդութեան համար։

Ա.Ր. Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

—

Գանձակի նահանգապետը առաջարկել է Շուշու և Նուխու գաւառապետին ու Գանձակի ոստիկանապետին, որ ներքին գործերի նախարարը այդ քաղաքների ներկայ տնտեսական հանգամանքներում կարելի և նոյն իսկ անհրաժեշտ է գտնում ներմուծել այդտեղ նոր քաղաքային օրէնսդրական օրէնսդրութիւն։ Այդ պատճառով Շուշի, Նուխի և Գանձակ կազմակերպելու են տեղացի բնակիչներից և քաղաքային դէպուտատների ժամանակաւոր քաղաքային տեսաններ, որոնք պէտք է խորհրդածեն ինքնավարութեան եղանակի մասին և որոշեն ներկայ արդիւնքները, նաև այն եկամուտները, որ այդ քաղաքները կարող են ունենալ նոր կանոնաւորութեան ներմուծումից յետոյ։

—

Ախալքալաքում ամսիս 2-ին թատրոնասէրները ներկայացրին Դ. Սունդուկեանցի «Էլի մէկ զոհը», որ կըրկընեց այնուհետև ամսիս 5-ին։ Առաջին ներկայացումից ստացել է է 80 ռ. զուտ արդիւնք, որ յատկացուած է ծխական դպրոցի օգտին։

—

Կ. Պոլսի հայոց պատրիարքին Զիլկադոյի ցուցահանդէսի մասնաժողովը առաջարկել է մասնակցել ցուցահանդիսի եկեղեցական բաժնին։

—

Հ. Պոլսում հրատարակուող «Մասիս» թերթը, որ խմբագրւում է յայտնի դրագէտ Գրիգոր Զոհրապի ձեռքով, այժմ նշանաւոր փոփոխութիւնների է ենթարկուել թէ արտաքուստ և թէ բովանդակութեան կողմից։ «Մասիսը» այժմ լոյս է տեսնում ոչ թէ երեք չաբաթը մէկ անգամ, այլ ամեն չաբաթ օր, պատկերազարդ և վերին աստիճանի խնամքով խմբագրւած։ Նշմարւում է որ խմբագրութիւնը աշխատում է աւելի մեծ տեղ տալ թերթի էջերի վրայ հասարակական առօրեայ խնդիրներին և դառնալ հասարակական օրգան։ Պէտք է դոհունակութեամբ խոստովանենք այստեղ, որ վերջին ժամանակներս պոլսեցիների մէջ մեծ չարժում է նկատւում ուսումնասիրելու և լուսաբանելու իրենց չրջապատող կեանքը և կազմւած է մի որոշ աշխարհահայեցողութեան տէր մարդկանց կուսակցութիւն, որ խմբւում է «Մասիսի» և «Հայրենիքի» չուրջը։

—

Պաշտօնական տեղեկութիւնների նայելով, Թիֆլիսի նահանգում քաղաքների մէջ 1891 թ. ընթացքում ծնւել է 5691 (3080 արական, իսկ 2621 իգական սեռից) հոգի, իսկ վախճանւել է 4296 (2462 արական, 1823 իգական սեռից) հոգի։ Իսկ գաւառների մէջ ծնւել է 24,843 (13,894 արական, 11,009 իգական սեռից) հոգի, վախճանւել է 15,910 (8642 արական, 7268 իգական սեռից) աւելացել է 8933 հոգի։ Առհասարակ ազգաբնակութիւնը այդ թւականին աճել է Թիֆլիսի նահանգի բոլոր գաւառների և քաղաքների մէջ, բացի Թելաւից և Թելաւի նահանգից։ Պակի, ծնունդի և մահուան դէպքերը, ինչպէս և ամուսնութիւնը ամենից աւելի նկատւում է Դորու գաւառում։

—

Պ. Պետրոսեանը հայոց մշտական խմբի մի քանի դերասանների հետ մտադիր է ուղևորւելու Բաթում և այնտեղ մեծ պատին մի չարք ներկայացումներ տալու։ Իսկ պ. Աբելեանը, ինչպէս լսում ենք, այդ ժամանակ ներկայացնելու է Բագւում։

—

Դիշեր չէ անցնում, որ Թիֆլիսի փողոցներում զանազան հարուստների

տների մօտ չը դանեն ընկերիկ մանուկներ։ Այդ դէպքերը այնպէս յաճախ են կրկնւում, որ ժամանակ է որ հասարակութեան լուրջ ուշադրութեան առարկայ դառնան։

—

Ինչպէս մասնաւոր տղբիւրից իմանում ենք, Թիֆլիսի քաղաքային վարկի գործունէութեան քննութիւնը արդէն վերջանալու վրայ է։

—

Պետերբուրգի «Бирж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգում գլուխ է եկել համաձայնութիւն սինդիկատի ու Նորելի մի կողմից, Ռոդչիլդի և Սև ծովեայ Կասպեան ընկերութեան մէջ՝ միւս կողմից։ Այդ համաձայնութեան հիման վրայ Ռուսաստանում նաւթային մենաւաճառը անցնելու է Նորելի և սինդիկատի, իսկ արտասահմանում՝ Ռոդչիլդի և ընկերութեան ձեռքը։

Արտասահմանում միայն Լոնդոնում, Համբուրգում և Բրեմենում նաւթ ծախելու իրաւունքը պատկանելու է երկու կողմերին ևս։

—

Յունւարի 30-ին Աշտարխանում ձմեռային թատրոնում, տեղի ունեցաւ հայկական ներկայացում, որ կազմել էր Կանանց Ընկերութեան նախագահ տ. Էդուարեանցը, իսկ կառավարում էր ռուսաց խմբին մասնակցող դերասան Պետրոսեանը։ Խաղացին Փառնակեսի «Գրականական երեկոն», «20000»-ը և Սունդուկեանի «Փիչերային սաբր» կոմեդիան. նոյնպէս դրուեց նւագա-երգեցիկ համերգ։ Ներկայացումը յաջող անցաւ չնորհիւ տ. Պետրոսեանի ջանքերին, որ հինգ փորձով կարողացաւ մի ներկայացում պլուխ բերել։ Պարոնին խումբը մի ոսկեայ չղթայ ընծայեց։

Լսւում է, որ տ. Էդուարեանը կամենում է մի մշտական թատերասէրների խումբ կազմել տաբեկան մի քանի ներկայացումներ տալու համար։

—

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

—

Շնորհակալութեամբ ստացանք հետևեալ գրքերը. 1 Փարսադան Տէր-Մովսիսեանից (Էջմիածնի ճեմարանի ուսուցչից) Das armenische Bauerhaus Ein Beitrag zur Cultur geschichte der Armenier, արտատպած „Mittheilungen der Anthropologischeu Qesellschaft in Wien“ թերթից։

2. Գրիգոր Մարգարեանից Կենսագրութիւն Սրբուհի մայրապետի Նշան-Գալֆաեան.

3. Ոնոփրիոս Անոփեանից Ամառնային ուղևորութիւնից դէպի Հայս. գրեց Նիկ. Մառ. թարգ. Ոնոփ. Անոփեան։

4. Աստ. Սէֆ. Սիրոյ պօէզիա.

5. Գր. Այվազեանից (Հրատարակչից) Աղբանից երկիր և դրացիք, ի Մակար Ծ. վ. Բարխուդարեանց։

—

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

«Մուրճի» ֆելիետոնիստ պ. Նահապետը, որ չատ է ձգտում սրախօս լինելու, սկսել է օրաթերթը խառնել, թէև «Օրէց օր» բաժին է վարում։

«Մուրճի» № 1-ում ի միջի այլոց ահա ինչ է ասում. «Տիֆլ. Լիստ.»-ը, եռանդով յափշտակւած, վերագրեց Պաստեօրին չեղած վաստակներ ֆիլոկսերայի վերաբերեալ, «Մշակը» ջրդողութեան (водянка?) վերաբերեալ, իսկ «Տարազը» միամտաբար կրկնեց «Մշակի» հաղորդածը»։ Կարճ, բայց ազդու... պ. Նահապետը այս մի քանի տողով ուզում է անկասկած ցոյց տալ ամենին, որ ամենքը տգէտներ են, սխալւում են, չեն իմանում՝ թէ ինչ են գրում, և հա-և որ կամ և ամեն բան գիտեմ...» ախոր ի՞նչ գուր չէ հա-և-հան իրան անւանում...

Այս անգամ թոյլ ենք տալիս մեզ նրան երազական դրութիւնից հանելու։

«Տարազը» իրա Պաստեօրի մասին խօսել է բժ. Վ. Արծրունու բերանով, մի բժիշկի, որ ինքը Պաստեօրի աշակերտ լինելով, անշուշտ աւելի լաւ է ուսումնասիրել յիշեալ պիտանական դիւտերը, քան թէ հա-և-մներն ու հա-չիմներն։ Միայն յարդելի բժշկի յօդուածի մէջ «ջրվախութեան» բառի փոխարէն դժբախտաբար սպրդել է «ջրգողութիւն», որի կողքին սակայն դրած է փակագծերի մէջ «կատաղութիւն» բառը. կարծում ենք պարզ է...

Երկրորդ. «Մշակի» յօդուածը Պաստեօրի մասին դուրս է եկել «Տարազի» այն №-ից յետոյ՝ որտեղ դիտելւած է Պաստեօրի մասին, ուրեմն սա էլ պարզ է, ոչ «Տարազը» չէր կարող «Մշակի» հաղորդածը կրկնել, և այն էլ «միամտաբար»...

Ո՞վ է ուրեմն «միամիտ» կամ «չասամիտ»...

—

Ժամանակաւոր Խմբագիր
ԲԺ. Դ. ԼԻՍԻՑԵԱՆ

—

Հրատ. Տիգրան Նազարեան.

—

ՅԱՅՏՍՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը պատիւ ունի ծանուցանելու ի դիտութիւն Ընկերութեան յարգելի անդամներին, թէ այս փետրուարի 14-ին, կիրակի երեկոյեան ժամը 7-ին Թիֆլիսի Գաղաքային Խորհուրդի դահլիճում նշանակած է Ընկերութեան Ընդհանուր Ժողովը, որի պարապմանն առարկանները լինելու են.

1) Անցեալ տարի համաձայակ խօսքայի առաթիւ ունեցած դրամատնութեան հաշիւը։

2) Խորհրդի զեկուցումը Ընկերութեան 10 անդամի կողմից անցեալ տարի յուլիս ամսում ուած յայտարարութեան մասին։

3) Խորհրդի քարտուղարի զեկուցումը ընկերութեան 19 Ներելիի հատմայ, այն է 1889, 1890 և 91 թուականների հաշիւների մասին։

4) Նոյն Ներելիի տնտեսական վարչութեան հատմայ հաշիւների (1889—91) քննութիւնը և հաստատութիւնը։

5) Խորհրդի հատմայ, այն է 1889, 90 և 91 թ. հաշիւների քննութիւնը և հաստատութիւնը վերատուգող յանձնաժողովի զեկուցագրի հետ միասին։

6) Ընկերութեան 1893 թուականի ընդհանուր նախահաշիւ (նկնդրանի և տեղ. վարչութիւնների) քննութիւնը և հաստատութիւնը։

7) Պաշտօնական անհանգ ընտրութիւնը
ա) Ընդհանուր ժողովի նախագահի և քարտուղարի Ներկայ թուականի համար։
բ) Խորհրդի 4 անդամների և 3 վերնանդամների։

Ծանօթ. Քանի պաշտօնավարութեան ժամանակը լրացրել են անդամ խորհրդի պ. պ. Ալեքսանդր Աճառեան, Փիլիպպոս Վարդանեան, Խահակ Ծովականեան, Մելիք-Ղարագեօզեան. վերնանդամի պ. պ. Ալեքսանդր Սուրենեան, Եվրեմ Մատուրեան և Ալեքսանդր Մելիք-Փաշայեան։

բ) 1892 թ. հաշիւները քննելու պաշտօն ունեցող վերատուգող յանձնաժողովի երեք անդամների։

Ընկերութեան քննութեան ենթակայ հաշիւները համաձայնութիւնը տպագրած լինելով, պարտական անդամները կարող են տանել մի մի օրինակ կամ վաղօրօք դիմելով Հրատարակչական Ընկերութեան գրասենեակը և կամ ժողովի օրը —Խորհրդ քարտուղարին։

Խորհուրդը խնդրում է բոլոր անդամներին վերանորոգել իրանց անդամակցութիւնը ներկայ թուականի համար դիմելով Հրատարակչական Ընկերութեան գրասենեակը և պ. Եփրեմ Պատուրեանի վաճառանոցը և ստանալ անդրագիր։

Փ. Նախագահ Խորհրդ Ա. ՄԱՆԹԱՇԵԱՆ
Քարտուղար Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
2—2

Շատ հմուտ գնորով հիւանդոց

«ԴՎՕՐԵԱՆՍԿԻ ՆՕՄԵՐԱ»

Ալէքսանդրեան այգու հանդէպ, ու Օրբելեանի Խաղողի յարդելի հասարակութեան յանձնել և չը խնայել անուշադիր։ 4—1

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ Ե ՎԱՃԱՌԻՈՒՄ Է

Թիֆ. բոլոր գրավաճառանոցներում

ՍԻՐՈՑ-ՊՕԼՋԻԱ,

Գինն է 20 կ.

Օտար քաղաքներից կարող են դիմել՝

Тифлисъ. Дешевая библіотека. Зангезуръ, Ал. Ст. Шах-Азизовъ.

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
Եւ
ՎԱՃԱՌԻՈՒՄ Է
ՅՈՎ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
Երկրորդ հատոր
Գինն է 60 կոպէկ.
Դիմել՝ Թիֆլիս, Կենդրոնական Գրավաճառանոցին կամ Հեղինակին—Норашенская ул. д. №28.

Իմ հեղինակութիւններից չսուերն արդէն սպառուած են, մնում են միայն

ՀԱՅԻ ԽՆԴԻՐ գինն	—80 կ.
ՇԱՀԷՆ	1 մ.—,
ՑԵՑԵՐ	1 մ.—,
ԲՂԴԵ	1 մ.—,
ՍԿԻԶՐՆ ԵՐԿԱՆՑ	1 մ.—,

Վերջին աշխատութիւնս մինչև ամսիս վախճանը դուրս կը գայ առանձին գրքերով և կուղարկուի պ. պ. բաժանորդներին։

Բոլոր իմ աշխատութիւններն այսուհետև կարելի է ստանալ ինձանից։

Հասցէս Թիֆլիս, Ներսիսեան դպրանոց. Тифлисъ Армянская Духовная Семинарія.

Գրավաճառներին և տասնից աւելի գումարով առնողներին կը լինի 30% զիջումն։

ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑ

ԲԱՑԻԱՆ Է 1893 ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

պատկերազարդ ԱՂԲԻՒՐԸ եւ ՏԱՐԱԶԸ կը հրատարակեն մշտական աշխատակցութեամբ պ. պ. Գաբրիէլ Միրզոյեանցի եւ Ստեփան Լիսիցեանցի, նոյն ծրագրով եւ դիրքով.

Տարեկան բաժանորդագինն է՝ «Աղբիւրինը» 3 ռ., իսկ «Տարազինը» 6 ռ., ամսական «Աղբիւրինը» —30 կ., «Տարազինը»—50 կ.։ Տարւայ ընթացքում ընծաներ կըստանան միմիայն «Աղբիւրի» եւ «Տարազի» տարեկան բաժանորդները վճարելով ճանապարհածախք 4 եօթ կոպէկանոց մարկաւ։ Ամսական բաժանորդները եթէ ցանկանան տարեկան բաժանորդ դառնալ, վճարում են նորից ամբողջ տարւայ բաժանորդագինը։

Ամառուայ ոչ օրի չի ուղարկուում. ուսուցիչները, ուսանողները եւ աշակերտները գրելով «Աղբիւրին» եւ «Տարազին» բաժանորդ, կարող են վճարել մաս մաս—5 ռ. յունուարին, 2 ռ. մարտի 1-ին, 2 ռ. էլ մայիսի 1-ին։

Հասցէն. Тифлисъ, Редакція иллюстр. журн. Агбюръ կամ Таразъ, իսկ արտասահմանից՝ Tiflis-Caucase Rébaction des jour. illustrés Agbur կամ Taraz.

Дозв. ценз. 13 февраля 1893 г. Тифлисъ

Типографія Груз. Изд. Т—ва.